



# ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15 Դեկտեմբերի, 2015թ.

ք. Երևան

## **«Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի անկախ ինստիտուցիոնալ համակարգի ստեղծման հնարավորություններն ու մարտահրավերները» աշխատաժողով**

2015 թվականի դեկտեմբերի 15-ին «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան Եվրոպական միության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ԱՄՆ շրջանավարտների ասոցիացիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ գործընկերությամբ կազմակերպեց «Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի անկախ ինստիտուցիոնալ համակարգի ստեղծման հնարավորություններն ու մարտահրավերները» աշխատաժողովը:

«Քաղաքացիական հասարակության դերը այս գործընթացում բավականին կարևոր է, ոչ միայն կառավարության վրա ճնշում գործադրելու, մոնիթորինգ ենթարկելու տեսակետից, այլ նաև ինտելեկտուալ աջակցության տեսանկյունից,- ասաց Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար դեսպան Պյոտր Անտոնի Սվիտալսկին և հավելեց,- առանց հասարակական կարծիքը մոբիլիզացնելու շատ ավելի դժվար կլինի բավարար արդյունքներ արձանագրել կոռուպցիայի դեմ պայքարում»:

«ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը մեծ ուշադրություն է դարձնում հակակոռուպցիոն բարեփոխումներին Հայաստանում: Գրասենյակն կառավարությանը ներկայացվող իր օժանդակությունը տեսնում է նոր հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մեջ: Մենք նաև խրախուսում ենք հասարակական կազմակերպություններին՝ բարեփոխումների իրականացման մշտադիտարկում անցկացնելու գործում», -նշեց ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը:

«Վերջին տարիներին հասարակությունը զգում է և բարձրաձայնում կոռուպցիայի վտանգավորության մասին: Շատ հետաքրքիր ազդակներ ունեցանք, մենք տեսանք նաև բիզնեսմենների կողմից պահանջարկ ու պատրաստակամություն պայքարել կոռուպցիայի դեմ, որը շատ կարևոր է», -նշեց ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Մուրեն Քրմոյանը:

«Մենք պետք է չխուսափենք լավագույն փորձն ուսումնասիրելուց, պետք է մեր հարևանների և տարածաշրջանի լավագույն փորձին ծանոթանալ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առանց հասարակության աջակցության հակակոռուպցիոն մարմինները չեն կարող արդյունավետ պայքար ծավալել», -նշեց ՀԵԻԱ նախագահ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող, Հայաստանի ԱՄՆ շրջանավարտների ասոցիացիայի հիմնադիր անդամ Կարեն Զաղոյանը:

Հայաստանի ԱՄՆ շրջանավարտների ասոցիացիայի գործադիր տնօրեն Ալեքսանդր Շագաֆյանը շեշտադրում արեց համատեղ պայքարի հարթակ ստեղծելու վրա. «Կոռուպցիայի դեմ պայքարի թերևս ամենարդյունավետ միջոցը բոլոր շահագրգիռ կողմերի ուժերի մեկտեղումն է», - ասաց նա:

Օրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Օրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կվճակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Օրագրին իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Օրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Օրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585.000 եվրո, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներդրումն է 15.600 եվրո:



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ

<p>Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա Հասցե՝ Նալբանդյան 7, քմ. 2 Երևան, Հայաստան, 0010</p>	<p>Ինֆորմացիայի ազատության կենտրոն Հասցե՝ Բուզանդի 1/3 Երևան, Հայաստան, 0010</p>	<p>Օրագրից համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից</p>	<p>Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուս, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային գանգալությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:</p>	<p>Օրագրից համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից Հեռախոս +374 10 229610 Հեռապատճեն +374 10 229615</p>	<p>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը գործում է 1999թ.ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրագիծների դեմ պայքարի, բնագավառական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:</p>
<p>Հեռախոս: +37410 54 01 99 Հեռապատճեն: +37410 58 02 99</p>	<p>Հեռախոս: +37410 56 03 60 Հեռապատճեն: +37410 56 03 60</p>	<p>Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն Հեռախոս +37410 54 64 94 Հեռապատճեն +37410 54 64 95</p>			